(19) AM

(51) ՄԱԴ (2023.01)
A63B 24/00

**Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գրասենյակ**

# ԳՅՈՒՏԻ ԼՐԻՎ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ (11) 809 Y

(21) Հայտի համարը **AM20220104Y**
(22) Հայտի Ներկայացման թվականը **04.11.2022**
(45) Հրապարակման ամսաթիվը **16.05.2023**
(56) **RU 2733870 C1, A63B 24/00, 2020**
(72) Գյուտի հեղինակը, երկրի կոդը **Նիկոլայ Իվանովիչ Բրիկո (RU), Մարկ Մարատովիչ Դյոմինով (RU), Վյաչեսլավ Նիկոլաևիչ Կրուտյկո (RU), Նատալյա Սերաֆիմովնա Պոտյոմկինա (RU)**

(71) Հայտատուն, երկրի կոդը **OOO «Սոյուզ սպորտ ի զդորովյե» (RU)**
(73) Արտոնագրատեր, հասցեն, երկրի կոդը **OOO «Սոյուզ սպորտ ի զդորովյե» (RU)**
(74) Արտոնագրային հավատարմատար **Լ. Ակոպովա**

## (54) Ֆիզիկական ակտիվության գործընթացի անհատական կազմակերպման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է անհատի ֆիզիկական զարգացման բնագավառին, մասնավորապես՝ արհեստական բանականության վրա հիմնված ֆիզիկական ակտիվության գործընթացի անհատական կազմակերպման եղանակին: Ըստ ֆիզիկական ակտիվության գործընթացի անհատական կազմակերպման եղանակի նախապես ձայնագրում են տեսանյութ, որում վարժությունը կատարվում է մարզիկի կամ մասնագետ-մեթոդոլոգի կողմից: Ստեղծում են էտալոնային անալոգ, կադր առ կադր կատարում են էտալոնային անալոգի մարմնի կետերի չափանշում: Չափանշման հիման վրա կադր առ կադր հաշվարկում են մարդու մարմնի բիոմեխանիկական ցուցանիշները՝ կետերի միջև հեռավորությունները և անկյունները, կետերի դասավորության ընդհանուր սխեման: Օգտատիրոջ նույնականացումից հետո, վարժությունների կատարման մեկնարկից առաջ տեսախցիկի միջոցով կարդում են օգտատիրոջ բիոմեխանիկական տվյալները: Համակարգի միջոցով ընտրում են համապատասխան վարժությունները: Վարժության կատարման ընթացքում գնահատում են օգտատիրոջ բիոմեխանիկական ցուցանիշների նմանությունը էտանոլային անալոգի հետ: Մարզվելու ավարտից հետո օգտատիրոջը ցուցադրում են վարժության կատարման որակի միջին գնահատականը և ամենախնդրահարույց հատվածների հետ աշխատելու առաջարկությունները: Ապահովվում է մարզումների գործընթացի արդյունավետության և անվտանգության բարձրացումը, 2 նկ.: